

նորոգուած է: Զիւրիգ եւ իցէ, այս տեղ՝  
 Բաջքարի հարաւային ստորոտը հին պատ-  
 մական հայ հողի վրայ ենք: Տայոց նահանգի  
 Արսեաց-փոր գաւառիս մասին՝ նաեւ քիչ  
 մ'ետքր:

Բաջքարի հիւսիսային ստորոտը՝ դէպ  
 ի ծով իջնող բազմաթիւ խոր ձորերէ կազ-  
 մուած է Համշէն: Այս աշխարհին՝ է դա-  
 րուն տիրած էր հայ իշխան մը Համաժ  
 անուն, Բաջքարի ճիշդ ստորոտը շինած  
 բերդ ու աւան (աւանդու թիւնը «քաղաք»,  
 կըսէ) որ իւր անուամբ Համաժաշէն կո-  
 չուեցաւ, յետոյ ամփոփուած՝ Համշէն:  
 Տեղւոյս չէ մանրամասնօրէն ուսումնասիրել  
 մանաւանդ այն յիշատակարանը, որ կցուած  
 է Յովհաննու Մամիկոնենի պատմագրու-  
 թեան վերջը<sup>1</sup>: Յիշենք միայն աւանդուածը  
 թէ Վաշդեան «Վրաց իշխան, հալածե-  
 լով իւր քեռորդին Համամ, պարսիկ զնդաւ  
 «էանց ընդ գեան Ճորոխ. եւ զնաց ի քա-  
 ղաքն Համամայ, որ կոչի Տամբուր. էհար  
 սրով եւ հրով եւ զերեաց զքաղաքն», Բա-  
 ղաքին նահատակուած եպիսկոպոսը Մանկ-  
 նոս անիծած էր Վաշդեանը, եւ «ի միւ-

<sup>1</sup> «Յովհաննու Մամիկոնենի եպիսկոպոսի պատ-  
 մութիւն Տարօնայ», Վենետ. 1832, էջ 56—58: